ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/1755 «20» 12 2022թ.

Ձեր

<<Հայփոստ>> ՓԲ ընկերության
գլխավոր գործադիր տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար
Ա. Աբրահամյանին

ՀՐԱՎԵՐ
ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ՁԵՎՈՎ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ոստիկանության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել փոստային ծառայություններ՝ կապված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ :

Առաջարկում եմ ձեզ մատուցել վերոնշյալ ծառայությունները:

Գնումները ֆինանսավորվելու է 2022 թվականի ԱՎՎ բյուջեով նախատեսված միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ **«Հայփոստ» ՓԲԸ-ն** ունի .*

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը

2. մասնագիտական փորձառություն

3. տեխնիկական միջոցներ

4. ֆինանսական միջոցներ

5.աշխատանքային ռեսուրսներ

Պետք է ներկայացվի սույն հրավերի և կից ներկայացվող պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան հայտը՝ հաստատված և ստորագրված:

Համաձայնության դեպքում պետք է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը:

Ոստիկանության գնդապետ **Վ. Մովսիսյան**

Կատարող՝ Ա.Սարգսյան
Հեռ. 51-52